ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Դդմաշեն բնակավայր *29.05.2024թ.*

Սույն թվականի մայիսի 29-ին ժամը 12.00 ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան խոշորացված համայնքի Դդմաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Լիմա սոլյուշն էներջի» ՍՊ ընկերության կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող արևային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և փորձաքննության վերաբերյալ հանրային քննարկումների (երրորդ հանրային քննարկում) նիստը:

Ներկա էին Դդմաշեն բնակավայրի վարչական ղեկավարը, Գեղարքունիքի մարզպետարանի, ձեռնարկողի՝ «Լիմա սոլյուշն էներջի» ՍՊԸ, «Քոնսեկոարդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչները և համայնքի բնակիչները (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով, և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքով հանդես Դդմաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գարիկ Ներսիսյանը: Նա ողջունեց ներկաներին և շնորհակալություն հայտնեց բոլորին ներկա գտնվելու համար: Ավելացրեց, որ սա 3-րդ հանրային քննարկումն է և խոսքը փոխանցեց «Լիմա սոլյուշն էներջի» ՍՊ ընկերության տնօրեն Սարգիս Մարտիրոսյանին:

Ս. Մարտիրոսյանը ներկայացավ, ասաց, որ սեփական հողատարածքի վրա նախատեսվում է արևային էլեկտրակայանի կառուցում, նշեց, թե որքան ներդրում է նախատեսվում անել: Ասաց, որ սկզբնական շրջանում շինարարության փուլում մոտավորապես 80 աշխատատեղ է բացվելու, իսկ շահագործման փուլում մոտավորապես՝ 12-15:

Ներկաներից մեկը հետաքրքրվեց, թե որքա՞ն է կազմելու օրական հզորությունը: Հարցին պատասխանեց Ս. Մարտիրոսյանը:

Ելույթով հանդես եկավ համայնքապետարանի ներկայացուցիչ Ավետիս Ավետիսյանը: Նա ողջունեց նախատեսվող գործունեությունը և ասաց, որ ձեռնարկողը պատրաստակամ է աջակցել համայնքի սոցիալական հարցերի լուծմանը:

«Քոնսեկոարդ» ՍՊ ընկերության աշխատակից Արամ Սարաջյանը իր ելույթում ասաց, որ իրենց կազմակերպությունը «Լիմա սոլյուշն էներջի» ՍՊ ընկերության հետ՝ պայմանագրային հիմունքներով, իրականացնում է սույն գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման աշխատանքները:

Շարունակելով, Ա. Սարաջյանը ներկայացրեց գործունեության հակիրճ բնութագիրը, դրա հետևանքով հնարավոր բնապահպանական ռիսկերը և դրանց մեղմմանն ուղղված միջոցառումները:

Ներկաները հարցրեցին, թե ի՞նչ դրական ազդեցություն կունենա գործունեությունը գյուղի համար:

Ա. Սարաջյանը պատասխանեց, որ ընկերությունը մասնակցելու է համայնքի սոցիալական ծրագրերին, բացի դա և՛ շինարարության, և՛ շահագործման փուլում հիմնական նախապատվությունը տրվելու է տեղի բնակչությանը:

Ս. Մարտիրոսյանն ավելացրեց, որ սկզբնական շրջանում նախատեսվող արևակայանի հարակից ճանապարհը նախատեսվում է բարեկարգել:

Բնակիչներից մեկը հարցրեց, արդյոք հնարավո՞ր է գործունեության արդյունքում էլեկտրաէներգիայի սակագնի իջեցում:

Ա. Սարաջյանը պատասխանեց, որ հնչած հարցի պատասխանը այս փուլում հնարավոր չէ հստակեցնել:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին, Գարիկ Ներսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Հանրային քննարկումների պատասխանատու՝ Գ. Ներսիսյանը

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝ Ս. Մարտիրոսյան

Քննարկումներն արձանագրեց՝ Մ. Հովսեփյան